ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 01

«15» հունվարի 2020թ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի>> մասին ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու 2020թ-ի հունվարի 15-ի թիվ 2-Ն որոշմամբ

Որոշում եմ

Հաստատել Սարահարթ համայնքի 2020թ.-ի բյուջեի եկամուտների, ծախսերի և ծախսերի նախահաշիվների եռամսյակային բաշխումը՝ համաձայն 1, 2 հավելվածների:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 06801657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 02

« 15 » հունվարի 2020 թ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԴԵԼԻՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ադելինա Ստեփանյանի 2020 թվականի հունվարի 13 -ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Սարահարթ համայնքի 10-րդ փողոց, 2 տուն հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ադելինա Ստեփանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 06801657